

ԳԼՈՒԲԱԼԱՑՈՒՄԸ ԵՎ ՀՀ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՏԵՄԱԿՅՈՒՆՆԵՐ

Էմիլ Օրդովսկայան
քաղաքական գիտությունների թեկնածու

Գլոբալացումը, լինելով արդի երկրաքաղաքական գործընթացների անկասելի բաղադրատարրը, անշեղորեն ավելացնում է իր տեմպերը և ներխուժում նաև ազգային-ավանդական, պահպանողական արժեհամակարգ ունեցող հասարակություններ¹, որոնք փորձում են պայքարել վերջինիս դեմ կամ մեղմել նրա ազդեցությունը երկրում տեղի ունեցող հասարակական-քաղաքական փոխակերպումների վրա²: Գլոբալացման դեմ պայքարի առաջամարտիկներն այսօր հիմնականում իսլամական պետություններն են, որոնք էլ ավելի շատ են զգում այդ գործընթացի վտանգները սեփական երկրի և հասարակության, մշակութային ինքնության պահպանման համար³: Այնուամենայնիվ, այդ երկրների կողմից ցուցաբերվող դիմակայությունը հանգում է ռազմական բախման՝ ի հակադրություն Արևմուտքի կողմից պարտադրվող ժողովրդավարացման մարդասիրական գործընթացի, որն էլ արդյունքում վերաճում է ռազմական գործողությունների: Այսօրինակ ճակատագրի վերջին տարիներին արժանացան մի քանի իսլամական պետություններ՝ Լիբիան, Եգիպտոսը, որտեղ պետական իշխանության դեմ քաղաքացիական-ընդդիմադիր ուժերի ընդվզումը և ռազմական պայքարն Արևմուտքի բուռն նյութական օժանդակությամբ և խրախուսմամբ հանգեցրեց իշխանափոխության ամենասարսափելի (ի դեպ՝ ժողովրդավարացում ոչ ժողովրդավարական միջոցներով) ճանապարհով՝ պատերազմի միջոցով: Արդյունքում դեռ վաղ է խոսել վերոնշյալ պետություններում ժողովրդավարության և հասարակական-քաղաքական կայունության մասին, որի համար կպահանջվի դեռ երկար ժամանակ:

Ինչու՞ են հիմնականում իսլամական պետությունները բուռն պայքարում գլոբալացման սպառնալիքի դեմ: Պատասխանը թերևս ակնհայտ է: Իսլամական հասարակության հոգևոր-մշակութային արժեհամակարգը մեծապես տարբերվում և նույնիսկ որոշ դեպքերում հակասում է արևմտ-

յան ազատական արժեքներին թե՛ քաղաքական, թե՛ մշակութային, թե՛ ավանդույթների համատեքստում: Եվ գուցե այս պատճառով զլոբալացումն իսլամական հասարակություններում համարվում է լուրջ արտաքին սպառնալիք, իսկ ժողովրդավարության արևմտյան մոդելը, իրեն հատուկ արժեհամակարգով՝ խորթ և անընդունելի երևույթ:

Իրականությունն այլ է «երրորդ աշխարհի» մյուս՝ ոչ մահմեդական երկրներում, որոնք ևս կամա, թե ակամա մասնակցում են զլոբալացման գործընթացին: Գլոբալացումը կարելի է ընկալել մի քանի երևույթների կամ տերմինների միջոցով, որոնք են՝ ժողովրդավարացումը, քաղաքական արդիականացումը, նյութատեխնիկական աջակցությունը, արտաքին ֆինանսական օժանդակությունը, մարդասիրական օգնությունը, միջազգային կառույցներին անդամակցությունը և այլն: Այս ամենն ուղղակի զլոբալացման մեխանիզմներն են, որոնք կիրառվում են թիրախային պետություններում և հասարակություններում: Բնականաբար, այս գործընթացից անմասն չեն կարող մնալ նաև հետխորհրդային պետությունները, որոնք գրեթե հավասար տեմպերով ներգրավվում են զլոբալացման գործընթացին:

Խորհրդային Միության փլուզումը հարմար առիթ դարձավ նորանկախ հանրապետությունների զլոբալացման համար, քանի որ վերջիններս, տարատեսակ և քաղաքական զարգացումների արդյունքում, կայացման և կայունության խիստ կարիք ունեցան, ինչն առանց նյութական-ֆինանսական օժանդակության հնարավոր չէրավ, քանի որ շատերը, այդ թվում նաև Հայաստանը, կորցրեց խորհրդային նյութատեխնիկական, արդյունաբերական ժառանգության մեծ մասը տարատեսակ հասարակական-քաղաքական փոխակերպումների կամ ոչ արդյունավետ կառավարման և քաղաքականության արդյունքում: Արևմուտքը և Ռուսաստանը չէին կարող ուշադրություն չդարձնել ստեղծված իրավիճակին, որը սաստկացավ նաև Արցախյան պատերազմով, ինչն էլ ավելի բարդացրեց Հայաստանի ներքին և արտաքին քաղաքական իրավիճակը: Արևմուտքը և Ռուսաստանը, հետապնդելով սեփական շահերը, առանց հապաղելու փորձեցին ստեղծել և ավելացնել ազդեցության գոտիներ տարածաշրջանում՝ ցուցաբերելով ինչպես նյութական օժանդակություն, այնպես էլ

Ռուսաստանի պարագայում՝ ձեռք բերել ռազմավարական նշանակություն ունեցող ռեսուրսները:

Արևմուտքի և Ռուսաստանի հետաքրքրությունները տարածաշրջանում, բնականաբար, հետապնդում են միևնույն նպատակները: Նոսքն ազդեցության գոտու, կերկայության ավելացման, ինչպես նաև էներգետիկ ռեսուրսներին ավելի մոտ լինելու քաղաքականության մասին է: Եթե Ռուսաստանը վերոնշյալ քաղաքականության իրականացման համար կարող է ստեղծել ռազմական դաշինքներ (ՀԱՊԿ) կամ կիրառել ավելի կոշտ միջոցներ (ինչպես օրինակ՝ Հարավային Օսեթիայի պատերազմը), ապա Արևմուտքի քաղաքականությունը իր մեթոդաբանությամբ տարբերվում է ռուսականից: «Արևմտյան էքսպանսիան» կիրառում է ավելի նուրբ և մեղմ մեթոդներ, հիմնականում ֆինանսական օժանդակություն՝ ի նպաստ ժողովրդավարացման գործընթացի: Արդյունքում այսպիսի մեթոդի կիրառության հասարակական ընկալումը լինում է ողջունելի (հիշենք գոնավոր հեղափոխությունները Ուկրաինայում և Վրաստանում): Միևնույն ժամանակ պետք չէ մոռանալ նաև արևմտյան կոշտ քաղաքականությունը իսլամական որոշ պետությունների նկատմամբ, որոնք մերժում են վերջինիս ժողովրդավարացման պարտադրական մոդելը, ինչպես օրինակ՝ Իրանը և Սիրիան:

Գլոբալացումն այսօր անկասելի գործընթաց է, որին ուղղակիորեն ենթարկվելը կամ հակադրվելը ճշմարիտ չէ: Այս հանգամանքը որոշ դեպքերում պայմանավորված է նաև մարդկանց ազատության ձգտման մղումով, ինչը տարբեր հասարակություններում ունենում է տարբեր դրսևորումներ: Շատ իսլամական, պահպանողական-ավանդական հասարակություններում ևս կա քաղաքացիների մի ստվար զանգված, որն ավելի շատ է հակված ազատության արևմտյան ընկալմանը և կերքին պայքար է մղում քաղաքական համակարգի ժողովրդավարացման-ազատականացման համար՝ ստանալով արտաքին օժանդակություն: Այս ամենը նշանակում է, որ գլոբալացումն իր բոլոր ընկալումներով անխուսափելի է, քանի որ հասարակությունը չի կարող չփոփոխվել ժամանակի պահանջով: Մակայն որևէ հասարակության ամբողջական կերպափոխումը ևս մեր կարծիքով անթույլատրելի է:

Վերադարձնալով Հայաստանում տեղի ունեցող գլոբալացման գործընթացին՝ չենք կարող չնկատել վերջինիս տարատեսակյալ դրսևորումները և դրանց ազդեցությունը ազգային-ավանդական արժեհամակարգի փոփոխման վրա: Սակայն կարևոր է նաև խոսել արտաքին ներկայության գործոնի մասին, որը հետզհետե ավելատում է Հայաստանում: Արևմուտքի պարագայում մեր երկիրը, ելնելով ստանձնած պարտավորություններից, մշտապես ենթարկվում է ստուգատեսային մշտադիտարկման՝ ամրապնդելով սեփական քաղաքական իշխանությունը ոչ միայն ներքին, այլ ավելի հաճախ արտաքին լեզվիտիմության միջոցով, երբ բոլոր համընդհանուր ընտրական գործընթացներից հետո ստացված գնահատականներն արձանագրում են որոշակի առաջընթաց՝ չբացառելով բազմաթիվ և բազմապիսի թերությունները: Նոր ժողովրդավարությունների կամ ժողովրդավարության ճանապարհը որդեգրած պետությունների համար սա միանգամայն սովորական, ընդունելի և «ուսումնական» գործընթաց է: Սակայն լինելով անկախ՝ մեզ համար առավել կարևոր է պահպանել բաղձալի անկախությունը դե ֆակտո, այլ ոչ թե դե յուրե: Իսկ անկախության պահպանումը փոքր պետությունների, այդ թվում՝ նաև Հայաստանի համար առավել դժվար գործընթաց է, քան գերտերությունների համար սեփական գաղափարախոսության և արժեհամակարգի տարածումը: Եվ շատ հաճախ գերտերությունների ներգրավվածությունը փոքր պետությունների ինքնուրույնության և սուվերենության գործում բավականին մեծ է:

Այսօր լինելով անկախ պետություն՝ Հայաստանը որդեգրել է ժողովրդավարացման ուղին, անդամակցում է բազմաթիվ միջազգային կառույցների, ստանձնել է բազմաթիվ պարտավորություններ, որոնք պետք է նպաստեն այդ գործընթացին, ունի ռազմական դաշնակիցներ, սակայն միևնույն ժամանակ արտաքին և ներքին բազմաթիվ խնդիրներ, իսկ երկրի արդիականացումը խիստ կարևոր և առաջնահերթ կենսական պահանջ է: Արդիականացման և ժողովրդավարացման գործընթացի վերաբերյալ գիտական գրականության մեջ առանձնացնում են բազմաթիվ մոդելներ:

Ամերիկացի քաղաքագետ Ս. Հանտինգթոնը նշում է, որ աշխարհը գտնվում է ժողովրդավարացման երրորդ ավիքի ազդեցության գոտում: Նա առանձնացնում է քաղաքական արդիականացման երկու մոդել՝ ինքնա-

բերաբար (ժողովրդավարացման առաջին փուլի երկրներ՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա) և հաջորդական (snowball-ձևագույն) (ժողովրդավարացման երկրորդ և երրորդ փուլի երկրներ), որտեղ ժողովրդավարացման հիմնական գործոնը, նրա կարծիքով՝ արդեն գոյություն ունեցող «համաշխարհային մշակույթի» հետ առկաՎող սոցիալ-մշակութային կապերն են: Արդիականացման հաջողությունը մեծ մասամբ պայմանավորված է տեղի ունեցող գործընթացների ներդաշնակությամբ, այսինքն՝ որքանով են դրանք համահունչ ազգային արժեքներին, ինչպե՞ս են ընկալվում հասարակության կողմից և արդյո՞ք արժանանում են վերջինիս համակրանքին: Միանշանակ կարելի է պնդել, որ հեղինակի այս մոտեցումն առավել համահունչ է մեր հասարակության արժեհամակարգին:

Մեկ այլ արևմտյան քաղաքագետ Ղ. Ռաստոտի կարծիքով՝ ժողովրդավարացումն անցնում է երկու փուլի՝ սկզբնական փուլ՝ ազատական և պահպանողական: Այդ գործընթացը տեղի է ունենում ազատական կամ պահպանողական մոդելի առավելությամբ: Ժողովրդավարացման պահպանողական մոդելը հիմնվում է քաղաքական գործընթացների կոշտ կառավարելիության և նախանշված նպատակներին հասնելու համար խնդրայնության մակարդակի նվազեցման սկզբունքների վրա: Այս պարագայում կրճատվում է ընդդիմության դերը, և ուժեղանում է քաղաքական կառավարման կենտրոնացումը: Ինչ վերաբերում է ազատական մոդելին, ապա այն նախընտրում է կառավարման ապակենտրոնացումը քաղաքական նպատակներին հասնելու գործում:

Այդ պարագայում հաջողության հասնելու համար վերջինս քաղաքական գործընթացներում ընդգրկում է օրինական քաղաքական ընդդիմությունը:

Նկատենք, որ վերոնշյալ մոդելներն այսօր լայնորեն կիրառվում են տարբեր պետություններում: Մակայն ազգային-պետությունների պարագայում մեզ համար միանշանակ կարևոր է պահպանողական մոդելի կիրառումը:

Հայաստանի Հանրապետությունում արդիականացման կենսական պահանջը պայմանավորված է մի քանի հանգամանքներով՝ 1. միգրացիայի հետզհետե աճագնացող տեմպերը ժամանակի ընթացքում կարող են հանգեցնել բնակիչների լուրջ նվազման, ինչն ազգային-պետական

անվտանգության սպառնալիք է, 2. արտաքին խնդիրների (հատկապես՝ Արցախյան հիմնախնդրի չլուծվածությունը) ծանրությունը և երկկողմ շրջափակումը լրջորեն սպառնում են երկրի տարածաշրջանային ինտեգրմանը, 3. սոցիալական պայմանների վատթարացումը, սոցիալական արդարության պակասը հանգեցնում են հասարակության օտարվածությանը, 4. անհեռատես արտաքին քաղաքականությունը հանգեցնում է լուրջ դժվարագիտական ձախողումների և այլն: Այս խնդիրների լուծումը, բնականաբար, դյուրին գործ չէ, և մեծապես կապված է ոչ կոմպետենտ քաղաքական իշխանության կամ նրա վարած ոչ արդյունավետ քաղաքականության հետ: Այդպիսի քաղաքականությունը կարող է մասամբ պայմանավորված լինել նաև տարատեսակ արտաքին գործոններով և մարտահրավերներով, որոնց դեմ պետք է պայքարի արդիականացման պահպանողական ուղին որդեգրած ցանկացած պետություն, եթե դրանք վտանգում են ազգային-պետական անվտանգությունը և մշակութային արժեհամակարգը:

Սակայն իրականությունը փոքր-ինչ այլ է: Այսօր Հայաստանի համար դե ֆակտո անկախության պահպանման և արդիականացման ուղին դարձել է ավելի դժվար՝ էլեկտրոլ օբյեկտիվ պատճառներից: Խոսքը, նախ և առաջ, անկախության առավել կարևոր բաղադրատարրի՝ էներգետիկ անկախության մասին է, քանի որ գլոբալացումը մեծապես ուղղված է էներգակիրների և ռազմավարական այլ ռեսուրսների տիրապետմանը, ինչը փորձում են իրագործել գերտերությունները: Ալեհայտ է, որ այս տեսանկյունից Հայաստանում իրավիճակն անմխիթար է: Մեր երկրում ռազմավարական նշանակության ռեսուրսները՝ էլեկտրակենտրոններ, ջուրը, կապը, երկաթուղին, հանքարդյունաբերությունը և այլ ռեսուրսներ ևս գտնվում են օտար (կամ կոնցեսիոն) կառավարման դաշտում: Այս հանգամանքը չի կարող չավելացնել Հայաստանի կախվածությունն այդ ռեսուրսներին տիրապետող և դրանք շահագործող պետություններից, որոնց շարքում առյուծի բաժինը պատկանում է Ռուսաստանի Դաշնությանը: Վերոնշյալ ռեսուրսները՝ բացառությամբ ջրի, հանձնված են հիմնականում ռուսական կառավարմանը, որի ներկայությունը մեր երկրում առավելապես մեծ է, եթե նույնիսկ հաշվի չառնենք հայ-թուրքական սահմանին տեղակայված ռուսական զորքերը: Բնականաբար,

առանց փոխշահավետ փոխզիջումների, փոխգործակցության և փոխա-
մաձայնության գլոբալացվող աշխարհում ապրելն անհնար է:

Կարևոր է նաև էներգետիկ այլընտրանքների հայթայթումը և դրա
ձեռքբերման դեպքում այն միևնույն կազմակերպության կառավարմանը
չհանձնելը, երբ ուղղակի վերանում է «այլընտրանք» բառի նշանակու-
թյունը: Խոսքն իրականական այլընտրանքային գազամուղը Հայոտսգազարդի
կառավարմանը հանձնելու մասին է, ինչը խոստում է անհեռատես և
կախյալ քաղաքականության մասին: Ազգային անվտանգության նշանա-
կություն ունեցող ռեսուրսները բացառապես պետք է լինեն ազգային
պետական սեփականություն, քանի որ դրանց հանձնումը օտար կամ
մասնավոր կառավարմանը, միանշանակ, ավելացնում է կախվածության
աստիճանը և թույլ չի տալիս պահպանել պետական ինքնուրույնության
պատշաճ մակարդակ՝ հետագայում հիմք հանդիսանալով արտաքին
ճնշման ավելացման կամ միակողմանի զիջումների:

Հայաստանի արդիականացման գործում անհրաժեշտ է ներգրավել
նաև սփյուռքը: Մփյուռքի դերակատարությունը երկրի զարգացման գոր-
ծում կարող է ապահովել լուրջ առաջընթաց՝ այն, ինչ տեսավ աշխարհը
Իսրայելի օրինակով: Հրեաները պետության դարավոր կորստից հետո
բացառապես սփյուռքի շնորհիվ կարողացան երկրորդ աշխարհամարտից
հետո հիմնել նոր Իսրայելը: Հետևաբար՝ սփյուռքի ներգրավումը
սեփական երկրի արդիականացման գործում չի կարող չլինել արդյունավետ:
Հայաստան-Մփյուռք փոխհարաբերությունները բազմապիսի են. նույնիսկ
այսօր գործում է Մփյուռքի նախարարությունը: Մակայն միայն սփյուռքա-
հայերին հայրենիք հրավիրելը և պատվելը չեն կարող նպաստել երկրի
արդիականացման գործընթացին: Անհրաժեշտ է Հայաստան-Մփյուռք
փոխհարաբերությունները վերածել արդյունավետ փոխգործակցության,
համատեղ ծրագրերի իրականացման՝ հանուն հայրենիքի զարգացման,
առաջընթացի և միջազգային դիրքի ամրապնդման: Ավելի կարևոր է ոչ թե
խթանել հայրենադարձությունը, որի համար հայրենիքում դեռ չկան
սոցիալական ապահովման և օժանդակության անհրաժեշտ ռեսուրսներ,
այլ, նախ և առաջ, պետք է կանխել կամ գոնե կառավարելի դարձնել
սփյուռքի արտագաղթը: Անհրաժեշտ է նաև երկրում ստեղծել սոցիալական,
տնտեսական և քաղաքական արդարության, հավասարակշռության
մթնոլորտ, որպեսզի սփյուռքը ավելի լայն ծավալներով ներգրավվի

ներդրումային քաղաքականության մեջ: Նիստ կարևոր է նաև հզորացնել սփյուռքը տեղում, որպեսզի սփյուռքահայերն առավելագույնս ինտեգրվեն տեղի հասարակություններին և ձգտեն ներկայություն ապահովել պետական կառավարման և ներկայացուցչական մարմիններում: Դա հնարավորություն կտա հետագայում նաև որոշակի ազդեցություն ունենալ այդ պետություններում կայացվող քաղաքական որոշումների վրա՝ օգտագործելով սփյուռքը որպես հզոր դիվանագիտական զենք:

Հայաստանի քաղաքական արդիականացման համար անհրաժեշտ է նաև մրցակցային-կոմպետենտ քաղաքական իշխանություն, որի քաղաքականությունը պետք է հիմնվի ազգային-պետական շահերի և մշակութային արժեհամակարգի գերակայության սկզբունքի վրա: Այս ամենի համար իշխանությունը պետք է կարևորի ոչ թե արտաքին, այլ ներքին լեզրիմությունը, ինչը հնարավորություն կտա քաղաքական լիդերներին արտաքին քաղաքականության մեջ լինել ավելի անկախ, վստահ և վճռական՝ իրենց հետևում ունենալով սեփական ժողովրդի աջակցությունը: Քաղաքական իշխանության գերակայությունների շարքում պետք է կարևորվեն նաև ազգային, հոգևոր-բարոյական արժեքների պետական խթանումը, ազգի մոսավոր ներուժի համաքաղաքումը, սոցիալական և քաղաքական արդարությունը: Պակաս կարևոր չէ նաև երկրում քաղաքական մենաշնորհի վերացումը, քանի որ ցանկացած տեսակի մենաշնորհ խոչընդոտում է զարգացումը և ազատ մրցակցությունը՝ թուլացնելով արդիականացման գործընթացը: Միևնույն կուսակցության կամ քաղաքական ուժի բացարձակ միանձնյա ներկայությունը պետական և տեղական իշխանության բոլոր օղակներում վերացնում է իրական քաղաքական մրցակցությունը՝ հանգեցնելով ոչ արդյունավետ քաղաքականության, հետևաբար՝ նաև լրջորեն դաժնադեմոստ է երկրի զարգացման տեմպերը և կարող է հրահրել հասարակական-քաղաքացիական անհնազանդություն:

Դիվանագիտական հեռատեսության շրջանակներում անհրաժեշտ է գերտերությունների շահերի հետ գտնել համապատասխանության եզրեր՝ փորձելով սեփական շահերը դիտարկել նրանց շահերի համատեքստում, ինչը հնարավորություն կտա արտաքին քաղաքականության մեջ հասնելու հաջողությունների՝ բացառելով վերջին տարիների լուրջ դիվանա-

գիտական ձախողումները (ֆուտբոլային դիվանագիտություն, սաֆարովյան արտահանվում և այլ)։

Միաեթնիկ հասարակություններով, ինչպես՝ Հայաստանում, գլոբալացումը, ըստ էության, ավելի երկարատև գործընթաց է, քանի որ այդպիսի հասարակություններում ազգային-ավանդական արժեքներն ավելի խորն են արմատացած հասարակական գիտակցության մեջ, ուստի այդ պայմաններում նպատակահարմար է, որպեսզի արդիականացումը տեղի ունենա պահպանողական մոդելի միջոցով, որը համեմատաբար զերծ է տարատեսական ցնցումներից և հաշվի է առնում պետության ազգային-ավանդական, մշակութային ժառանգությունը՝ որպես արդիականացման հիմնաքար։

Ամփոփելով վերոշարադրյալը՝ վստահորեն կարելի է պնդել, որ Հայաստանի համար արդիականացման այսպիսի ուղին գլոբալացվող աշխարհում բնավ դյուրին չէ, բայց և անհրաժեշտ։

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Jayantha Dh., Globalization and the Nation State /The Colorado Journal of International Environmental Law and Policy/, Boulder, Colorado 7 April 2001, 8 p., file:///G:/S%20drive/ddaweb-2004/speech/07apr2001.htm (1 of 8) [08/26/2008 10:50:21 PM]
2. Sherrow O. Pinder, The Nation State in the Era of Globalization: Some Challenges/ International Journal of Humanities and Social Science, California State University, vol. 1 No. 2; February 2011, p. 139-148.
3. Abu Sadat Nurullah, Globalisation as a Challenge to Islamic Cultural Identity/ The international journal of interdisciplinary social sciences/, vol. 3, number 6, Melbourne, 2008, p. 45-52.
4. Zarifian J., La politique étrangère américaine en Arménie: naviguer à vue dans les eaux russes et s'affirmer dans une région stratégique / Hérodote, Editions la Découverte, n. 2, 2008, p. 109-122.
5. Huntington S., How Countries Democratize/ Political Science Quarterly/ Vol. 106. No. 4, p. 186.
6. Хантингтон С., Запад уникален, но не универсален/ МЭ и МО. № 8, 1997, с. 85.
7. Растой Д., Переходы к демократии. Попытки динамической модели // Полис. № 5, 1996. с. 5-15.
8. Растой Д., Переходы к демократии. Попытки динамической модели // Полис. № 5, 1996. с. 5-15.